

ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ

Ե. — ՅԱՂԱԳՍ ՄԻՋՆՈՑ ՔԱՌԱՍՆՈՐԳԱՅ ՊԱՀՈՅՆ

Մրբոյն Թէոփիլոսի, շնորհալից լարդապետի ասացեալ Յաղագս Միջնոց Քառասնորդաց Պանոցն: (1)

(Նախորդը տե՛ս «Սիոն», 1976, Մայիս, քիւ 5:)

Ընդմիջեցաք տ՛ա² զձով պահոցս այս քառասնորդաց, յորում ժառք նաւաւք թեթեւ ի ձով այս³, ձով՝ որ կարող է ցամաքեցուցանել զձով մեղաց, ձով՝ որ կայացաւ առանց չիւթոյ արբեցութեան, առնկ արդարութեան բազում ստաւք, որ բխեցէ զպատուս զանազանս, պարզեցիով կերտոցն զկեանս անմահութեան: Մով՝ որ ոչ ըստ սովորութեան նեխեալ փառեցուցանէ զարժատս⁴ պարբերաց, այլ սնուցանելով իրրե կերակուր պարարտ և ատաք կացուցանէ. կոչեցի⁵ ձով և սնուցանիցէ զսուկնս, որ ընկեալ է ի սմա առանց ջրոյ: Մով՝ որ առանց ջրոյ պարարտ արտացէ զ՛սուկս⁶ ցարենոյ, և արտացէ զմինն բխել ձ, յշահմարանս Տեառն:

Մով՝ որ ոչ թէ ունիցի ձկունս անբանս⁷ և տացէ արտաքս ի ձեռս արսարդաց, այլ ձով է ար⁸ զանբանս յարդարութենէ արտացէ բանաւորս, և զերաշտարնակս ժողովեցէ⁹ տա ինքն: Եւ արտացէ զ՛իւսնդացնալսն ի ծարաւոյ՝ կենդանի, և զընակեալսն ի սմա՝ ի ծարաւի պահեցէ ի զեղխանաց արբեցութեան: Մով՝ որ ոչ եթէ զմտեալսն ի սմա խեղդեացէ¹⁰, այլ առուել զարացուցանէ, և ելեալն ի սմանէ մեռանի: Վասնզի ամենայն ցամաքասընուենդ¹¹ կենդանի[ք] ի ձով անկեալ մեռանին¹² և սպականին, և ամենայն ջրոյին կենդանիք ի ցամաք ելեալ ստատկին¹³:

Բնագիր Գ (= Ձեռ. Ս. Յ. Թ. 173) էջ 783բ-790ա: Հմմտ. Դ (= Թ. 11) էջ 565ա-573բ: Ե (= Թ. 732) էջ 40բ-54ա: Չ (= Թ. 792) էջ 356-361:

1 Մրբոյն Թէոփիլոսի, ասացեալ, վասն Քառասնորդոյ Պանոց Միջոց: ԴեՁ

- 2 Չուցի տ՛ա, Գ
- 3 Չուցին՝ ձով այս, ԴեՁ
- 4 նեխեցէ զարժատս, ԴեՁ
- 5 պարարտացուցանէ, կոչեցի, ԴեՁ
- 6 պարարտացէ զ՛սուկս, ԴեՁ
- 7 անբաւս ԴեՁ
- 8 Չուցին՝ այլ ձով է որ, ԴեՁ
- 9 զերաշտարնակնս ժողովէ, Դե: զերաշտարականս ժողովէ, Չ
- 10 այլ զօրացուցէ, ԴեՁ
- 11 ցամաք սնսընուենդ, Գ
- 12 ստատկին, ԴեՁ
- 13 Չուցին՝ և ամենայն ... ելեալ ստատկին, ԴեՁ

Այլ ի ծովս յայս մտանելով մեր, որ սպակոնեալն իցէ մեղօք՝ նորագեսցի, և կալով մեղ ի մէջ ծովուս, ծարաւ մնամք ի գեղխութեանէ ախտից։ Ապա եկաք¹⁴ այսուհետեւ զծով պահոցս այս, յորում միջածովեցաք այսուր ի վերայ ծովու մեղաց, զի կարի քաջ գիտեմ, որ ծովս այս պահոց¹⁵ պնդութեան¹⁶ կարող է ցամաքեցուցանել զծով մեղաց չարեաց¹⁷, և զբանաւոր ձկուսն, որ շրջին ի սմա, ապրեցուցանէ ի մէջ ցամաքոյ։ Եւ ոչ եթէ միայն ապրեցուցանէ առանց մլեասու, այլ յնրկինս վերացուցանէ, այլ և զնաւորդեալսն ի ծով այս պահոցս ոչ արասցէ նաւաբեկ, այլ ի մէջ մորկաց, իբրև ի մէջ սպիտակացնալ նաւահանգստի պահիցէ¹⁸։ և նաւապետ սորա ի վեր է քան զերկինս, ուր ոչ կարեն բարձրանալ ալիք ծովու, և ոչ բաւեն հասանել ընկղմիչք նաւաց։ Եթէ զսիւն նաւացս նաւորդեալքս հաւատով հաստատեսցուք, և զառագաստս զործովք առաքինութեան տարածեսցուք, յայնժամ¹⁹ կարացուք քաղցրաշունչ հոգծով, որ փշեալ ի Հագուսն Սրբոյ ի մէջ ծովուս յայս, յորում այսօր միջածովեցաք, հասանել ի կատարեալ²⁰ նաւահանգիստն, յորում տեսանելոց եմք նստեալ զնաւապետն, և ի մարմնոյ իւրոյ կերակրէ զամենեկեան, և յանարատ արենէ իւրմէ արբուցանէ զայնսսիկ, որք արժանապէս²¹ մտաչելոց են առաջի նորա Սբ. Սեղանոյն, որք արժանաւորին ճաշակել ի նմանէ ի մէջ նաւարկութեան ծովուս այս, և որք յայնժամ ապա արժանաւորին, որպէս²² և գիտէ իւրաքանչիւր սբ, զխիղճ մտաց իւրոց։

Եւ արդ յոյժ բարեօք²³ նաւեցաք և հոտաք ի մէջ ծովուս յայս, և մնացաք²⁴ առանց մլեասու, և ուրախացան նաւապետք ի վերայ սեղիղ նաւագնացից մերոց, զի ոչ ծանրացան նաւք մեր²⁵ ի շատակերութեանէ ախտից, և ոչ բեկան ալէկոծ մարտիւ ախտակք մեր²⁶ ի յարեցութեանէ գեղխութեանց։ Այլ տարածելով զառագաստ բարեպաշտութեան պարկեշտ կերակրով՝ միջածովեցաք ի մէջ հոգնեցոյց ծովու պահոցս։ Այսուհետեւ ջանս գիցուք, զի այսպիսի թեթև նաւաւք նաւեցուք, և բարեօք կատարեսցուք զնաւարկութիւնս մեր²⁷։

Մի՛ ծանրացուցէ զնաւս մեր գեղխումն շատակերութեան, և թուլացուցանէ զալէկոծ տախտակս մեր իբրև զորդնահարս՝ արբեցութիւնն, և մի աճեցուցանէ զդէզս ալեացն շոգժողութիւնն, և մորիկ մտանութեանն մի դրդուեսցէ զնաւս մեր. մի զարթուեսցեն զձմեռն՝ ընկղմիչ

14 եկաք, Գ
 15 Չունի, պահոց, Գ
 16 Չունի՛ն՝ պնդութեան, ԴԵԶ
 17 չարաց, Գ
 18 պահեցէ, ԴԵԶ
 19 Չունի, յայնժամ, Գ
 20 կատար, ԴԵԶ
 21 արժանաւորապէս, ԴԵԶ
 22 սբ, Գ
 23 եւ
 24 Չունի, յայս, և մնացաք, Զ
 25 Չունի՛ն, մեր, ԴԵԶ
 26 նաւուս, ԴԵԶ
 27 Չունի՛ն՝ մեր, ԴԵԶ

պոսնկուլթիւնն և շնուլթիւնն, մի ի վեր բերցուք զնաւարեկուլթեան հոգմունս՝ զգոգուլթեան, և զգրկանաց, զնախանձու և զբանբասանաց, զերգման և զանիծից տխաս: Եւ յարժամ դայս ամենայն կատարեսցուք, ևս առաւել ջանասցուք զի մի ընդ²⁸ վիմի տխակալութեան հարկանիցի նաւս պահոց մերոց, ուր անհնարին է ապրել ամենայն հնարից արուեստական նաւավարութեան, այլ այնր ջանաւք, որ մինչև աստ բարուք նաւեցաք և առանց նաւարեկութեան, այնիւ և աստի նաւեցուք:

Եւ արդ՝ մի՛ կամաւ մերով ի վերայ յարուցանեմք զմերիկ ալէկոծութեանն և լինիցիմք խորասոյզ, այլ որպէս մինչև աստ բարուք նաւեցաք, նայնպէս և աստի մինչև ի կատարեալ նաւահանգիսան, և անդ հասանելով մի՛ համարձակապէս արձակիմք²⁹, որպէս զգաղանս քաղցեալս ի վերա գիշոյ դիակաց³⁰, և ի շնուլթիւն, և յարբեցութիւն, և յերգս գիւական, և զաղտորեմք ի սաղմոսաց³¹, և յեկեղեցւոյ դատարկանամք³² յաղօթից և ի պաղատանաց³³, և ոչ առնեմք սղորմութիւն, այլ ի զրկանս և ի³⁴ յափշտակութիւնս յարդարիմք, թողումք զսէր³⁵ եղբրոց, և յօխակալութիւնս պարտիմք³⁶, յապաղիմք³⁷ յամենայն առաքինութենէ և գործեմք զամենայն շարիս: Եւ որ³⁸ այսպէս հանդերձեալ է առնել՝ ապա զի՞նչ աւգտեսցի ի պահոցս պնդութենէ, և ի տագնապելոյ յայսցանէ, զոր կրէ ի ծով պահոցս յայս³⁹:

Այլ նմանեսցի այնպիսին⁴⁰, զոր աւրինակ, նաւավարք բարուք նաւեցեն մինչև յեզր նաւահանգրտին, և՛ անդ՝ ոչ զգուշանան, այլ համարձակ⁴¹ վարելովն հարկանիցի զվիմի(ն), և խորասոյզ լինիցի, և ոչ աւգտեսցան առանց վնասու անցուցանելոյ⁴² զամենայն մրրիկս ալիաց⁴³ ծովուն: Քանզի ոչ եթէ միայն ի մէջ ալիաց ծովուն պարտ է զգուշանալ նաւավարացն⁴⁴, այլ և առ եզր ծովուն ի վիմէ և ի կոշտից քարանց: Ոչ է պարտ մեզ այնպէս առնել⁴⁵, և միայն ի ժամանակս պահոց զգուշանալ ի մեզաց, և առնել առաքինութիւնս, այլ և յամենայն ժամքանգի պահս ոչ եթէ վասն կերակրոյ միայն սահմանեցու, այլ յամեն-

28 ևս ընդ, Գ
 29 արձակիցիմք, ԴԵԶ
 30 դիականացն, ԴԵԶ
 31 Չուցից, ի սաղմոսաց և, ԴԵԶ
 32 Չուցից՝ դատարկանամք, ԴԵԶ
 33 ի սաղմոսաց, ԴԵԶ
 34 Չուցի ի զրկանս և ի, Գ
 35 Չուցի զսէր, Գ
 36 պարտիմք, ԴԵԶ
 37 Չուցի՝ յապաղիմք, Զ
 38 Չուցից՝ որ, ԴԵԶ
 39 հանդերձեալ [եմք՝ առնել, զինչ] ապա աւգտեսցաք ի տագնապելոյ յայսցանէ, զոր կրեցաք ի յայս ծով պահոցս, ԴԵԶ
 40 Այլ այնպէս նմանեցաք, ԴԵԶ
 41 համարձակապէս, ԴԵԶ
 42 անցանելոյ, ԴԵԶ
 43 ալէկոծութեան ալիաց, ԴԵԶ
 44 նավարեացն, Ե
 45 անպալթ առնել, ԴԵԶ

նայն ախտից⁴⁶ մեղաց: Քանզի կերակուրն եթէ վնաս ինչ էր, սակայն բողբոջէր պահել. որպէս յամենայն ժամ լսեմք⁴⁷ վասն շնութեան, վասն սպա(ն)նութեան, վասն գողութեան, և վասն այլ ամենայն յանցանաց. այլ ոչ ասաց զիր այսպէս և ոչ լուսք երբեք:

Եւ վասն այսորիկ, յորժամ հասանեմք յաւրն յայն մեծ⁴⁸, յորում զենաւ մեզ զատիկն մեր Քրիստոս, ոչ կարասցուք ասել թէ մի ուտիցէք միս, և մի ըմպիցէք գինի, այլ միայն զարբենալն արգելու երանելին Պօղոս:

Իսկ զշնալն⁴⁹, և զպոռնկելն, զարբենալն, և զգողանալն, զսխակալութիւնն, զբարկութիւնն⁵⁰, զնախանձն, զհեռն, զբանբասելն, (զսպաննելն) զսպանանելն, յամենայն ժամ⁵¹ ասէ և պատուիրէ, և զպատուհասն ի վերայ արկանէ⁵² և ասէ՝ թէ զարքայութիւնն Աստուծոյ ոչ ժառանգեն:

Իսկ ստատանայ, վասնզի հանապազ մաքառել սովոր է ընդ ազգս մարդկան, և ելանելով ձեզ ի ծովէ պահոցս և ի մեղս անկանիցիք, դարձեալ ապաշաւելով ապաշխարեցէք. լսեցէք⁵³ զպատուիրանն Պօղոսի, միթէ անկեալն ո՞չ յառնիցէ. և այնպէս զամենայն ժամանակս կատարելով, որ ի մեղս անկանիցի՝ զգուշացի յիշելով զայս և ջանս զնէ ապաշխարել, և այնպէս զտանիցի ի վաղճանելն իւրում յապաշխարութիւն և կեցցէ:

Զի որպէս վասն մահկանացու մարմնոյ մերում⁵⁴, ոչ հրամայէ զիր պահս պահել հանապազ, այլ ուտել, զի մի պակասեցին մարմինք մեր⁵⁵, և անդամք մեր լուծանին: Այսպէս և վասն անմահ հոգոց մերոց, զի մի պակասեցի, հրամայէ⁵⁶ աստուածային զիր, ոչ շնալ, ոչ սպանանել, ոչ գողանալ⁵⁷, և ոչ այլ ինչ յանցանս գործել. զի որպէս ուտելն զմարմինն հաստատէ, նոյնպէս և շառնելն զայս ամենայն՝ զհոգին հաստատէ⁵⁸:

Իսկ եթէ վասն անցաւոր մարմնոյ մերում զամենայն ջանս գիցուք և արասցուք⁵⁹, և գիտեմք ստուգապէս, զի այսուր եմք և վաղիւն անցանեմք, ո՞րչափ ևս առաւել պարտ է վասն անմահ հոգոց մերոց ջանս զնել և ի բաց կալ յազարից մեղաց: Եւ արդ՝ զի՞նչ իցէ ապիրատութիւն, զի անցաւոր մարմնոյս⁶⁰ այնչափ խնամակալուք լինիցիմք,

46 այլ վասն ամենայն, ԴԶ: այլ վասն ախտից, Ե

47 յայնժամ լսեմք, ԴԵԶ

48 մեծագոյն, ԴԵԶ

49 իսկ երանելին Պօղոս դարձեալ զշնալն, ԴԵԶ

50 Ձուկի՛ն, զբարկութիւնն, ԴԵԶ

51 յայն ժամ, ԴԵԶ

52 ի վերայ գնէ և, ԴԵԶ

53 Ձուկի՛ լսեցէք, Զ

54 մարմնոյ իւրոյ, ԴԵԶ

55 զի մի նուազեցիցին և ապականեցին մարմինք մեր, ԴԵԶ

56 զի մի պղծեցի և ապականեցի, հրամայէ, ԴԵԶ

57 չչնալ, չգողանալ, չսպանանել, չզրկել, ԴԵԶ

58 Ձուկի՛ հաստատէ, Գ

59 արասցուք, Գ

60 մարմնոց, Գ

մինչ զի սակաւ մի վերաց ոչ ներեմք, և զհոգիս բերապատիկ վերա-
 ւարեալ տեսանեմք ի նեախնն սատանայի, և հոգս ոչ առնեմք: Իսկ վի-
 րուսբեալ անդամս մեր թէպէտ և ողջացցի, սակայն յետոյ տղտղանե-
 լոց է. ապա թէ զվերս հոգոց մերոց ողջացուցանեմք, ոչ մեացի յաւի-
 տեան: Եւ ոչ հաւատար մարմնաց մերոց խնամակալ լինիցիմք հոգոց մե-
 րոց: Եւ զթնչ ասացից հաւատար, սակայն և ոչ զհինգերորդ մասն (այս
 է զհրնկէն զմէկն, ԴեՁ). քանզի տեսանեմք բազմաց ձիս, և ջորիս, խա-
 շինս, և երամակո բազմաց անասնոց, հանդերձս մեծագինոց, և սկիս և
 արծաթս, անդապտանս և տունս գեղեցկապէնս⁶¹, և այն ամենայն յազոզս
 մարմնոյն:

Եւ թէ ասացուք այնպիսոյն թէ տուր⁶² ազքատաց զայսպիսի ինչ
 սակաւ կարօտաւթիւն, և նա հոգս պատճառս ընդգէմ արկանէ և սու-
 կին ունիմ, ուստերս և դստերս, վասն որոյ⁶³ ոչ կարեմ վաճառել զինչս
 իմ, և սալ ազքատաց, դուցէ ես մեռանիմ և նոքա ազքատ մնացնն:

Ով ցուրտ պատճառանացդ⁶⁴, քանզի զբազումս տեսաք մեռեալ և
 թողեալ ինչս բազումս ուստերաց և դստերաց իւրեանց⁶⁵, և վազվազակի
 հոգանէին յեախն⁶⁶ ստոնապանս ազքատաւթեան. և զայլս որ ոչ ինչ թո-
 զին, և որդիք նոցա հասին բազում փարթիւմութեան: Մի՛ զայդ ածէք
 զմտաւ, այլ զայս՝ զի Ատուած է որ կերակրէ զամենայն մարմին, և
 վասն այսորիկ քեզ սէ Ած. թէ՛ տուր ազքատաց, և խնդրեա զարքա-
 յութիւնն Ատուածոյ, և մի հոգար վասն քս, և ոչ վասն որդոց քոց,
 զի այն ամենայն յաւելցի քեզ. իսկ եթէ զոր Ատուած քեզ արեալ է՝
 դու ազքատին ոչ տացես յորժամ գայցէ ի գրունս⁶⁷, և նախ աղաչանաց⁶⁸
 ձայն արձակէ և սսէ. տուր ողորմութիւն⁶⁹ ողորմածք և ձ. ապառիկ
 տացի ձեզ, և արքայութիւնն կրկնից, և դու ոչ տացես, սակա թէ ոչ
 կարեմ թողուլ ազքատ զորդիս իմ: Ով անմիտ, զիա՞րդ, որ քեզ ես՝
 որդոց քոց ոչ տացէ. քաւ լիցի: Արդ պահեցեր դու որդոց քոց, և թէ
 նա որ ես առցէ՝ զի⁷⁰նչ արտացես⁷¹ գոււ Այս՝ սակեմ քեզ կարող է նա
 անուուլ զայն յորդոց քոց: Մի՛, աղաչեմ, մի այդպէս ածցես զմտաւ,
 զի եթէ տաս⁷² առատութեամբ, ձ. պատիկ աստ դատնիցես⁷³, և անդ
 զարքայութիւնն կրկնից մատանգես:

Արդ՝ եթէ խորհիս թողուլ կնոջ քոյ և որդոց քոց⁷⁴ ինչս, տեսմ
 քեզ թէ մի թողուցուս. այլ յիւրաքանչիւր տարւոջ զամենայն ինչս քո

61 արծաթս, և այն, Գ
 62 այնպիսեացն տուրս, Գ
 63 Չուելի՛ վասն որոյ, Գ
 64 պատճառաց, ԵՁ
 65 Չուելի, իւրեանց, Գ
 66 և նոքա հասին այնու վազվազակի յեախն, ԴեՁ
 67 ի դուռն քս, ԴեՁ
 68 աղաչեսցէ, Ե
 69 Չուելի, ողորմութիւն, Գ
 70 Չուելի, Ով անմիտ, Գ
 71 և նա ես քեզ զայն, առցէ ի նմանէ, դու զի⁷⁰նչ արտացես, ԴեՁ
 72 ասա, Գ
 73 առցես, ԴեՁ
 74 զաւակաց քոց, ԴեՁ

բաժանեա ի միաս քո, և գրածինն անձին քուժ սուր աղքատաց, և մնացես ի կեանսն յայն առանց տանջանաց:

Արդ զի՞նչ կարիցես⁷⁵ առ պատասխանի բանիցդ, եթէ ոչ կռապաշառթեան . բժտան անկեալ է ի սրտի քուժ, և ջանաս պատճառս սուտս արկանել ի վերայ պատճառանաց. քանզի սուր արծաթ(ա)սիրութիւն բնակեցէ՛ բազում արժատս չարեաց սնուցանէ, զի ի նմանէ ծնանի ադահութիւն, յափշտակութիւն, նախանձ, ասելութիւն, անգթութիւն⁷⁶, անողորմութիւն: Քանզի ասէ զմեծատունն⁷⁷, ասէ և զաղքատն: Զմեծատունն ասէ, զի զինչս նորա իւրն կամնցի, և զաղքատն ասէ, զի մի ասցէ ինչ նմա: Արծաթասէրն լաւ համարեսցի⁷⁸ հատանել յանդամոց իւրոց, քան թէ առ յընչից իւրոց այլոց. արծաթասէրն ծառայ է ընչից իւրոց⁷⁹ և ոչ ակեր. և Պաղտո իսկ ասէ՝ բերանն Յիսուսի, լեզու Քրիստոսի⁸⁰, անօթ Հոգւոյն Աստուծոյ, վկայ է և ասէ. Արծաթսիրութիւն, որ է կռապաշառթիւն, արծաթսիրութիւնն է արժատ ամենայն չարեաց: Արդ՝ լուայք զպատիւ արծաթասիրաց, լուարուք արդեաւք զպարզես սղորմածաց:

Չայր առատ և զուարթս սիրէ Տէր⁸¹, ասէ զիր. և դարձեալ ասէ՝ զմեղս քո սղորմութեամբ քաւեսցես, և զանաւրէնութիւնս քո արաւք անանկաց, և այլուր թէ տեսանիցես⁸² զաղքատս կերակրեա, և զանյարկս տար ի տուն քո, և ապա յորժամ⁸³ կարդասցես առ Աստուած քո, և լուիցէ քեզ, և եթէ իցեն մեղքն ձեր իրբև զձանձախարիթ՝ իրբև զձիւն սպիտակ արարից⁸⁴. և թէ իցեն իրբև զորդան կարժիր՝ իրբև զասր սուրբ արարից⁸⁵: Եւ Քս. հրամայէ թէ՛ հկայք աւրնեալք Հաւր իմոյ. ժառանգեցէք զարքայութիւնն երկնից:

Այս ամենայն սղորմածացն վայել⁸⁶ է, և դու տես թէ թողում սրդոց իմոց, միթէ որդիքն քո կարե՞ս ապրեցուցանել զքեզ ի հրոյ դհնն(ւ)ոյն⁸⁷: Այս՝ ասէ՛ զիս՞րդ, լուր. թողից նոցա ինչս բազումս, և ես յորժամ մեռանիցիմ ասցեն քահանայից, աղքատաց, չքաւորաց⁸⁸, կարուսեալոց, և անդ աւգանցայց: Բարեւք ասացեր, արդ եթէ վասն սրդոց քոց ոչ թողեր, զի մի աղքատացին, դու վտան ընդէ՞ր ոչ բաշխեցիր, եթէ ոչ ախտ արծաթսիրութեանն կապեալ է զսիրա քո, զայն-

75 կամիցիս, ԵԶ
76 յանդգնութիւն, ԴԵԶ
77 մեծատունն արծաթասէրն, ԴԵԶ
78 համարի, ԴԵԶ
79 Չուելի, արծաթասէրն... իւրոց, Գ
80 բերանն Քրիստոսի, Գ
81 Արդ լուայք զպատիւ արծաթսիրութեանն, զի զայր առատատուրս և զուարթսիրա սիրէ Տէր, ԴԵԶ
82 և Եսայի ասէ թէ տեսանիցես, ԴԵԶ
83 Չուելի, յորժամ, Գ
84 Եւ եթէ իցեն մեղք քո իրբև զձանձախարիթ սրպէս զձիւն սպիտակ արարից, ԴԵԶ
85 Չուելի, և թէ իցեն... սուրբ արարից
86 Չուելի՝ վայել, ԴԵԶ
87 կարող են թափել զքեզ ի հրոյն յաւիտեանից, ԴԵԶ
88 Չուելի՝ չքաւորաց, Գ

պիտոյն եթէ զամենայն ինչս իւր, զոր թողեալ իցէ, տացեն աղքատաց՝ ոչ աւագեսցի, բայց եթէ ի կենդանութեանն սովորութիւնս ունիցի⁸⁹ տալ կարաւանաց⁹⁰:

Արդ՝ եթէ ոք ստացեալ է⁹¹ ինչս բազումս, և թագաւորն հանապազ աղերսէ ի նմանէ, զի տացէ նմա, և նա ոչ ևս տացէ, և յետոյ վաղճանի այրն, և որդիքն⁹² զամենայն ինչս նորա տացեն թագաւորին, ս՞ւմ համարի թագաւորն զերախտիսն, նմա՞ թէ որդոց նորա: Ինձ այսպէս թուի⁹³, թէ որդոցն համարի և ոչ նմա: Այսպէս և զայն իսկ համարեալ⁹⁴, զոր որդիքն տացեն աղքատաց վասն հանգստեան հարցն իւրեանց:

Բայց ունիմ այլ ինչ ասել վասն հաւատացեալ ննջեցելոցն մխիթարութեան ի ձեռն պատարագաց, որ մատուցանի պատարագ մարմին և արիւն Որդոյն⁹⁵ Աստուծոյ, և արդ, ինքն մատուցանի պատարագ, և ինքն ընդունի զաղաչանս, և նա ինքն ողորմեսցի, և հանդիստ շնորհեսցէ⁹⁶ ննջեցելոցն: Իսկ մեզ պարտ իցէ, մինչ⁹⁷ ժամանակ իցէ սերմանելոյ՝ սերմանել, զի ի ժամանակի հնձոցն հնձեսցուք: Իսկ որ ի ժամանակս սերմանելոյն ոչ սերմանէ, զի ս՞րդ ակն ունիցի հնձել, զոր սերմանեալ ոչ իցէ⁹⁸: Արդ՝ աստ տացուք աղքատին մին, և անդ առցուք ի Քրիստոսէ բիւրապատիկ, աստ աձցուք⁹⁹ զաղքատն ընդ յարկաւ մերով, և անդ Քրիստոս կալեալ զձեռանէ մերմէ, և մուծանէ յարքայութիւնն երկնից: Աստ կերակրեսցուք զաղքատն ի սեղանի մերում, և անդ տացէ մեզ Քրիստոս զհացն երկնային, զի մի քաղցեսցուք յաւիտեան:

Աստ պատուեսցուք զաղքատն առաջի մարդկան, զի անդ փառաւորեսցէ զմեզ Քրիստոս, և պատուեսցէ առաջի հրեշտակաց¹⁰⁰. աստ զգեսցուցուք զաղքատն խոշորագոյն զգեստիւ, և անդ զգեսցուցանէ զմեզ Քրիստոս լուսեղէն փառաց զգեստիւն: Աստ¹⁰¹ ընդունեսցուք զաշխատեալն ի տունս մեր, և անդ ընդունի զմեզ Քրիստոս ի յարկսն արդարոց: Աստ հանգուցանելով զմեզ զճանապարհորդս, և անդ հանգուցանէ զմեզ Քրիստոս, ճանապարհորդելով յանցաւորէս յանանցական բարութիւնսն¹⁰²: Աստ սիրեսցուք զընկերս մեր բոլորով սրաիւ, և անդ սիրէ¹⁰³ զմեզ Քրիստոս բազում գթութեամբ իւրով: Չայս ամենայն աստ այսպէս արասցուք, և անդ ի տանջանաց մի՛ երկիցուք, այլ զարքայութիւնն Աստուծոյ վայելեսցուք ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր¹⁰⁴:

(Շար. 11)

Հրատ. Ա. Յ. ՍՐՃՈՒՆԻ

⁸⁹ ունէր, ԴեՉ ⁹⁰ աղքատաց, ԵՉ ⁹¹ ստացեալ ունիցի, ԴեՉ
⁹² Չուցիցի, տացէ, և յետոյ վախճանի այրն և որդիքն, Ե: և յետ վախճանի նորա, թէ որդիք նորա զամ. ինչս նորա, ԴՉ
⁹³ Չուցի՛ թուի, Գ ⁹⁴ հրամայեսց, Գ ⁹⁵ Չուցիցի, Որդոյն, ԴեՉ
⁹⁶ Չուցիցի, և հանդիստ շնորհեսցէ, ԴեՉ ⁹⁷ Չուցի՛ մինչ, Ե
⁹⁸ զոր զսեր ոչ է, Չ ⁹⁹ տարածեսցուք, ԴեՉ
¹⁰⁰ փառաւորեսցէ առաջի հրեշտակաց, Ե
¹⁰¹ Քս. լուսովն անստուերու: Աստ, ԴեՉ
¹⁰² և անդ Քս. հանգուցանելով յանցաւորէս, յանանցական բարութիւնսն, ի տեղուջ լուսոյ և ի տեղուջ հանգստեան, ԴեՉ
¹⁰³ սիրեսցէ, ԴեՉ
¹⁰⁴ Այ. ժառանգեսցուք ընդ սուրբս նորա, ԴեՉ